


Історія ж. f.

Іркут - Іркутськ
(імператорський зразок)



1999

ԵԼ ՄԵԽԵՍԵԱՆ

ՄԻՔԱԼ ԻՍԿԵԱՆԴՐԱ

(ՊԱՐՍԿԱԿԱՆ ԶՐՈՅՑ)



Ա Տ Ե Ն Ն Ա

Մ Ի Թ Ա Ր Ա Ն Ա Տ Վ Ի Ւ Ն

1894.

L5n

1336

ИЗДАНИЕ А. ТЕРЪ-ГУКАСОВА

(Карсъ, Губернаторская ул., домъ Исакова).

Настоящая брошюра дозволена цензурою къ свободно-
му обращенію въ Росс. Имп. (отз. Центр. Ком. иностр.
ценз. въ С.П.Б. отъ 18 марта 1895 г., № 953).

ԲԵԼ ՄԵԽԱՆԵՍՑԵԱՆ

ՊՐԻՐՉԱ ԻՎԿԵԱՆԴՐԱ

2033.



(ՊԱՐԱԿԱԿԱՆ ԶՐՈՅՑ)



ԱՐՁԱԿԱՆ

ՄԻՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1894.



ՆՈՒԷՐ

ՄԵԺԱՊԵՏԻՒԹԻՒՆ

ՊՐԵ. ԽՈՍՔՈՎ



ԱՐՁԱԿՄԱՆԵԱՆՑԻՆ

ՀԵՂԻՆԱԿԻՑ

28. 1339

41336-60

ՀՀ-0221



արսկաստանի թավըիկ քա-
ղաքի Սաբզեպազար
քաղաքամասի խա-
նութներից մէկի մէջ
նատում էր մի պարսիկ
գրագիր, Միրզա Խո-
կեանդար անունով:
Նա պարապում էր
հասարակ ամբոխի

համար գիր անելով, գեւերից փրկելու, գլխացաւից
ազատելու, եւ ուրիշ հաղար ու մի հին ու նոր գար-
գերի մասին:

Մեծ համարմունք ունէր նա ամբոխի մէջ:
Երբ ամէն երեկոյ եւ առաւօտ երկար ջիւբբան
քցած, խինայած մօրուքով, հանգիստ եւ թազպեհի
հատիկները դարձնելով մէջիդ էր գնում, ամէնքը
նրան մի սուրբ մարդ էին համարում:

Եւ իրաւունք ունէին: Արտաքին երեւոյթը,
բարեպաշտ ձեւերը, խօսածները, կարող էին շատ
միամիտների հաւատը գրաւել:

Երբեմն նա փողեր էր հաւաքում զանազան բարի նպատակների համար շատ պրտաշարժ խօսքերով եւ . . . եւ յայտնի չէր թէ ինչ էր անում նրանց հետ։ Միրզան երբեք սովորութիւն չ'ունէր հաշիւ տալու+ բայց երբ հարկաւոր էր փող հաւաքել, նա տուողների անունները միշտ առանձին առողմանութեամբ կանչում էր բարձրաձայն հասարակութեան մէջ։

“Բանդէյի մուսուլմաններ — ասում էր նա ոգեւորուած — բահմաթթիք Հաջի Իրզա Համմադանիյի որդի՝ Մաշատի Մուրթուզան երկու զլան տուեց քաղցածների համար։ Ալլահ մին բեարաքեաթ վերսրն . . . եա բաբեի։”

Տարիները անցնում էին իրար ետեւից, եւ Միրզա Խսկեանդարը միշտ մի որեւէ պատճառ ունէր փող հաւաքելու։

* * *

Պամազան ամիսն էր։

Աղօթողների մէծ բազմութիւն լցուած ջումա մէշիդում լուռ կատարում էին իրենց վաղրդեան նամազը, երբ Միրզա Խսկեանդարը գլուխը կախ եւ հանդարտ քայլերով անցնելով բազմութեան միջից կանգնեց ամբիոնի վրայ։

Խորին լուռութիւն էր։

“Բանդէյի մուսուլմաններ — խօսեց նա արտասուքը սրբելով — թող Ալլահի եւ Մուհամմամետի օր հնութիւնը լինի ձեր վրայ։ Երկու ամիս առաջ ես յայտնեցի ձեզ Զեյնալաբադցիների ողբալի վիճակի մասին։ Այն ժամանակ Հրաւիրեցի ձեզ նպաստամատցոց լինել Զեյնա-

լաբադի բարձրաւանդակների վրայ հրդեհից վնասուած անտուն անօգնական, ձեռուուայ ցրտին բոկոսն մնացած խեղճերին։ Եւ ժողովուրդը՝ որ միշտ համակրութեամբ է վերաբերուել այդպիսի գործերին, մեր հրաւերը ընդունեց։

“Այս անգամ մի բարի գործ սկսելու համար չէր խօսքը, այլ քանդածը շինելու, ընկածը ուսքի կանգնեցնելու համար. այս անգամ ուղղափառ մուսուլմանները հրաւիրուում են օգնելու իրենց վնասուած գժբախտ եղօրը, եւ այն էլ աղիղ եղօրը։

“Մուսուլմաններ։ Մենք մեր եղբայրական, մեր կրօնական պարտքը կատարենք. օգնենք Ճշմարիտ տառապեալներին. օգնութեան ձեռք մեկնենք թշուառ Զեյնալաբադցիներին։ Տուէք եւ թող Հաղըաթը Աբբասը մէկին հազար բազմացնի ձեր ունեցածը։”

Կէս ժամի չափ խօսեց Միրզա Խսկեանդարը, եւ երբ նա վերջացրեց իւր յուզուած ճառը եւ ամբինից իշնելով սալաւթ քաշեց երեսին, հասարակութիւնը նրա աչքերում տեսաւ արտասուքի կաթիլներ։

Մի քանի րոպէի մէջ Միրզան իւրաքանչիւր տուողի անունը բարձր կրկնելով, հաւաքեց Զեյնալաբադի հրկիվեալների օգտին 1500 դռան։

* * *

Այդ օրից անցաւ երեք տարի, երեք երկար ու ձիգ տարիներ։ Միրզա Խսկեանդարը շարունակում էր իւր բարեպաշտական սովորութիւնները. նրա շըթունքները միշտ աղօթք էին մրմթջում եւ

Նրա մատները ամբողջ օր զբաղուած էին թաղ-
պեհի հատիկները դարձնելով։

1887 թուի աշնանն էր, երբ մի գեղեցիկ օր,
տեղական մզկիթներից մէկի պատերից մէկի վրայ
բարեպաշտ մուսուլմանները հետեւեալ յայտա-
րարութիւնը տեսան։

“Յայտնի է որ մի քանի տարի սրանից առաջ
Զեյնալաբագիների անունով հանդանակութիւն-
ներ եղան։ Այդ փողերը ուր ուղարկուեցան չգի-
տենք։ Ոմանք պնտում են թէ փողերը այժմ եւս
թավզիգումն են գտնուում եւ հաւատացնում են՝ որ
գումարը մօտ 3000 դռան է։ Ցիշեցնելով այդ
մասին ուղափառ մուսուլմաններին, ցանկալի
կը լինէր հրապարակաւ իմանալ՝ մնում են այդ
փողերը, թէ գիշակերներից կլանուել են։”

Յայտարարութիւնը կարդաց նաեւ Միրզա
Խսկեանդարը. Նրա գյոնը թուաւ. երբեք այդ տեսակ
հարուածի չէր սպասի նա. երբեք տարի է փառաւոր
կերպով կերել էր այդ փողը. ոչ թէ միայն այդ,
այլ դրա նման նաեւ շատ ուրիշներ. սակայն մինչեւ
այդ, նրանից ոչ ոք հաշիւ չէր պահանջել. եւ ում
խելքին կու գար յիրաւի այդ տեսակ բարեպաշտ
մարդուց հաշիւ պահանջել։ Աակայն հանդամանքը
ծանր էր, ինչքան էլ անունը յիշուած չլինէր, այդ
ակնարկութիւնները բացարձակ կերպով նրան էին
վերաբերում, ուստի հարկ էր գլուխը պրծեցնել։

Ի զուր չէր Միրզա Խսկեանդարը տասնեակ
տարիներ հասարակութեան աչքին թող փչում
զանազան թալիսմաններ եւ ջադուներ ծախելով,
որպէս փրկարար միջոցներ զանազան ախտերից։
Նա գիտէր ամէն գժուար տեղերից իւր գլուխը

պրծեցնել, ուստի նա իրեն չկորցրեց։ Կրկին
անդամ կարդաց յայտարարութիւնը, սալաւաթ-
քաշեց եւ ցինկպաբար ծիծաղելով դարձաւ ժո-
ղովութիւն։

“Բարեպաշտ մուսուլմաններ — խօսեց նա
— որովհետեւ դարձեալ խօսք կայ Զեյնալաբագ-
ցիներին օգնելու, հարկաւոր ենք համարում
յայտնելու, որ մենք Զեյնալաբագի հրկիվեալների
համար հաւաքեցնք 1500 դռան, որը եւ ուղար-
կուեցաւ այն տեղ, որ տեղ պարտաւոր էինք ուղար-
կելու։ Թիւրիմացութեան տեղիք չտալու համար
մենք նորէն կը կրկնենք նուիրատուների անունները.
ահա նրանք, լսեցեք։”

Այդ խօսքերի հետ Միրզա Խսկեանդարը՝
որպէս իւր Ճշմարտութեան եւ արդարութեան
ամենամեծ ապացոյց, հպարտ հպարտ հանեց իւր
անթարիի գրպանից մի թղթի կտոր եւ նուիրա-
տուների անունները սկսեց կարդալ։

Հազիւ Միրզա Խսկեանդարը վերջացրել էր
իւր խօսքը, որ բազմութեան միջից առաջ անցաւ
մի երիտասարդ պարսիկ վաճառական։ Նա յու-
զուած էր երեւում. հասարակութիւնը հետա-
քըզբութեամբ շոջապատեց նրան։

Միրզա Մուսան — այդպէս էր երիտասարդի
անունը — մի փոքր սպասեց, եւ երբ բազմու-
թիւնը հանդարտ լսում էր, սկսեց խօսել։

“Մէջիդի գրան կալցրած յայտարարութիւնը,
բարեպաշտ մուսուլմաններ — ասեց նա — ան-
հետեւանք չմնաց։ Այժմ բանից երեւում է որ
3000ի կէսը 1500 դռան ստացել է Սարգիսա-
զարում գրբացութիւն անող Միրզա Խսկեանդարը։

Միրզան մի բոպէ առաջ յայտնեց, որ յիշեալ 1500 դուանը ուղարկուած է այն տեղ, որ տեղպարտաւոր էինք ուղարկելու: Այժմ մնում է իմանալթէ այդ գումարը, որը յատկապէս ջեյնալաբադի հրկիզեալների համար էր հաւաքուած, Միրզա Խսկեանդարը երբ, ո՞ր ամսին, ո՞ր քաղաք եւ ում անունով է ուղարկել. որովհետեւ այն տեղ, որ տեղ պարտաւոր էինք ուղարկել, շատ խորհրդաւոր խօսքեր են: Ամենքին յայտնի է որ “այն տեղ, որ տեղ պարտաւոր էինք ուղարկելո” զանազան մարդիկ զանազան տեսակ են հասկանում. իսկ յիշեալ փողերը անպատճառ պիտի գնային ջեյնալաբադի հրկիզեալներին, եւ ոչ թէ այն տեղ, որ տեղ պարտաւոր էինք ուղարկել: Հասարակական հանդանակութիւնը մի սրբութիւն է. ամէն մի բարյական մարդ պէտք է զգուշութեամբ եւ երկիւզածութեամբ վարուի այդ սրբութեան հետ. հակառակ դէպքում սրբազդութիւն կարող է առաջանալ, եւ մեր պարտականութիւնն է հարուածել այդ սըստապղծութիւնը:”

Երիտասարդը վերջացրեց: Ամենքը սպասում էին. բայց լուռ էր Միրզա Խսկեանդարը. նա շփում էր մօրուքը, եւ աչքերը խփելով աղօթք էր մըմնջում:

— Միրզա Խսկեանդար, ասում էին նրանքառեկամները. ինչո՞ւ համար չէք պատասխանում ձեր վրայ եղող այդ անխիղճ զըպարտութիւններին երկու խօսքով. ուղարկեցինք փողը այս ինչ սառափի կամ այս ինչ չարվագարի միջոցով. չէ՞ որ այդ փողերը դուք պէտք է որ ուղարկած լինէք:

— Լա իլահ, իլլ’ Ալլահ, Մհամմատու ուսուլ ուլլահ — կրիսում էր Միրզան. — ինձանից պահանջում էք, բարեկամներ — շարունակեց նա ձայնը բարձրացնելով, — որ միանգամբ խփենք, ոչնչացնենք այդ անվայել եւ տմարդի արշաւանքը, լաւ գիտենալով որ գործին նուիրուած եւ այդ գործի համար ամէն զոհաբերութիւն յանձն առնող մի մարդ կարող չէ անհաւատարիմ լինել գէպ ի հասարակական փողերը. այդ փողերը մենք ուղարկել ենք ջեյնալաբադում մի մաքթաբիսանել* բանալու:

— Ապացնյա, զավլ, ** — ձայն տուին հասարակութեան միջց մի քանի հոգի:

— Կարող ենք հաւատացնել — խօսեց Միրզան — որ մենք բացատրութիւն տալուց չենք փախչել. եթէ գիտենանք որ մեզանից բացատրութիւն պահանջողը գործի սիրուցն է անում: Ովքե՞ր են այդ հաշիւ պահանջողները. մի երիտասարդ դարբին եւ Միրզա Մուսան. թող չզարմանան ուրեմն որ մենք ուղղակի բացատրութիւն չենք տալիս: Աւելի լաւ կ'անէր Միրզա Մուսան, որ յայտնէր եւ բացատրութիւն տար թէ ինչ եղան Աքբեար Սպահանցու հաւաքած այն 2000 զուանը, որը այդ վերջինը սկսեց հաւաքել ջումա մէշիդի շինութեան համար:

Տրտոնջը ընդհանուր էր + ամենքին էլ յայտնի եղաւ որ Միրզա Խսկեանդարը մի միայն պատրուակներ էր բերում փախչելու համար. ամէն կողմից սկսեցին պարսիկ, թուրք, ասորի բղաւել՝

* Դարբոց:

** Ստացական:

— Փողերը, Միրզա Խսկեանդար, փողերը...
— Ղանզ, զանզ, կրկնում էին ուրիշները...
— Լօմին մարսելէ — ասում էին շատերը...:

Այդ ընդհանուր շփոթութեան մէջ կրկին
առաջ անցաւ Միրզա Մուսան: Մի բոպէ լուսակիւն
տիրեց. բայց այս անգամ Միրզա Մուսան երկար
չխօսեց:

“Միրզա Խսկեանդարը — խօսեց նա —
երկար ու բարակ փաստեր բերելով՝ ուզումէ հաս-
տատել, որ ինքը հաշիւ չէ տայ. որովհետեւ հա-
շիւ պահանջողները մի հրեւէ գարբին եւ մի քանի
թշնամիներ են. նա արդար չէ գտնում որ ինքը
հաշիւ տայ, քանի որ Աքբեար Սպահանցին ջումա
մէշիդի փողերն ուտում է: Բերեմ մի օրինակ: Մի
անգամ, զօրախաղի ժամանակ, եալէրը գառնալով
սարվաղներից մէկին”

— Ադա, Մամմատ Ալի, այտան դիւզ դոյ*
— ասում է:

— Փիյէ, — պատասխանում է սարվաղը —
Էյլա գեօղի մանի գեօրդի. Հասան Ալի դիւզ
դոյսլն, մանդա դիւզ դօյլմ: ** Նման չէ արդեօք:
Դիյուք Աքբեար Սպահանցին ջումա մէշիդի փո-
ղերը կերաւ, եւ թող նահլաթի կայ նա. բայց
միթէ նրա այդ փողերը ուտելը ազատում է Միրզա
Խսկեանդարին պարզ պատասխանելու: Դա շատ
զարմանալի է, ուստի սպասում ենք որոշ տեղեկու-
թեան, ըստ որում բարեգործականնպատակաւ. Ժո-
ղոված գումարի հետ, ինչպէս անցեալ անգամ

* Մահմատ Ալի, ոտքդ ուղիղ դիր:

** Հենց աշքը ինծ տնաւաւ. Թող հասան Ալին ուղիղ
դիր, եւ էլ ուղիղ դնեմ:

ասեցինք, պէտք է զգուշութեամբ վարուել. կըրկ-
նում ենք, կարող է սրբապղծութիւն առաջնալ:

— Շէյթան, շէյթան, իւզունա նահլալ: *
— մրթմրթում էր քթի տակ Միրզա Խսկեանդարը՝
քանի խօսում էր Միրզա Մուսան. եւ հենց վերջացրեց
թէ չէ, Միրզան հաղաց, մօրուքը շիեց, սալաւաթ
քաշեց եւ սովորական հանդարտութեամբ, ժպիտը
երեսին այսպէս սկսեց.

“Նացէք, ովուզզափառ մուսուլմաններ. ար-
դարութեամբ վարուելով՝ մենք այն սովորութիւնն
ունինք, որ մի տեղ լաւ միտք գտնենք, թէկուզ
կորած տեղումն էլ լինի, սիրով ընդունում ենք եւ
հետեւում նրան: Արա համար էլ ընդունում ենք
մեղ դէմ ուղղուած այն միտքը թէ հասարակական
հանգանակութիւնը մի սրբութիւն է եւ ամէն մի
բարյական մարդ պէտք է զգուշութեամբ եւ եր-
կիւղածութեամբ վարուի այդ սրբութեան հետ.
Հակառակ դէպքում կարող է սրբապղծութիւն ա-
ռաջնալ: Այս խօսքերը ասողը անտարակոյս
ֆալտափեան տրամադրութեան մէջ է եղել եւ
աշխատել է արհեստական կերպով լարած զգա-
ցումները փրոն խօսքերով արտայատել:

“Հասարակական հանգանակութիւնը ամենեւ-
ին սրբութիւն չէ, եւ դէպի նրան հարկ էլ չկայ եր-
կիւղածութեամբ մօտենալու, հետեւաբար հասա-
րակական փողերի անհետանալով՝ սրբապղծութիւն
կարող չէ առաջնալ: Խօսենք պարզ լեզուով:
Լաւ բան չէ հասարակական գումարների վատնելը.
բայց աշխարհ էլ չի քանդուիլ, երբ մարդ իրեն
վստահացած մի գումար վատնումէ. դրանով կոր-

* Սատանայ, սատանայ, երեսդ անիծած:

չում է մի միայն փողը։ Եթէ այդ տեսակ մի բանի համար Միրզա Մուսան այսպէս արշաւում է մեր դէմ, հետաքրքիր էնք իմանալ՝ ի՞նչպէս պէտք է հարուածէ նա աւելի բարձր սրբապղծութիւններ, որոնք ընտանիքներ են կործանում, պատուական ծնողներ սուրդի մէջ քցում, ամբողջ սերունդներ ապականում, եւ կամ՝ Աքբեար Սպահանցու պէս, ապօրինի զաւակների թիւը շատացնում։”

Միրզա Խսկեանդարը ուզում՝ էր արդէն իշնել ամբիոնից, որ տեղից նա իր այդ բացատրութիւնը տուեց. սակայն չորս կողմից շարունակուում էին հեգնական աղաղակները։

— Միրզա Խսկեանդար, մի փախիր. Միրզա Խսկեանդար, ասա, ո՞ւմ միջոցով կամ ի՞նչ ձանապարհով ողարկեցիր այդ փողերը. Միրզա Խսկեանդար զավզ. Միրզա Խսկեանդար, քո վեցը կոտրուի. այ գետինը մտնես. Միրզա Խսկեանդար . . . :

Միրզա Խսկեանդարը վախեցաւ, ափոթնեց, սակայն չկորցրեց իրեն. նա կրկն չորս կողմ նայեց. “Քանի որ Աքբար Սպահանցին — ասեց նա — ջումա մէջիդի հաշխւը չի տուել, մենք հարկաւութիւն չենք համարում բացատրութիւն տալու։” Այդ խօսքերով էլ Միրզա Խսկեանդարը վէճը փակեց, եւ օձիքը թափ տալով՝ իրեն տուն քցեց։

Հարցը այդ տեղ էլ մնաց։ Ոչ ոքի համար այլ եւս կասկածելի չէր, որ Միրզա Խսկեանդարը կերել էր այդ փողերը, եթէ ոչ՝ նա փոխանակ այդքան պատէպատ ընկնելու, շատ կարծ միջոց ունէր արդարանալու. ցոյց տալ փողերի երբ, ո՞ւմ միջոցով եւ ուր ուղարկելու։

Թքեցին, միեցին, անպատռեցին. բայց լրու էր Միրզա Խսկեանդարը, եւ ցինկապար ծիծաղելով շարունակում էր իւր մէջիդ գնալը։ Կարծես այդ բոլորը իրեն չէին վերաբերում։

* * *

Վնցան օրեր, շաբաթներ, ամիսներ, երկար շատ երկար ամիսներ, տարին արդէն մօտ էր վերջանալու։ Մի օր, ձմեռուայ մի ցուրտ օր, թավթիզե փողցներում կանչում էր մի մունետիկ։

“Այ հաղարաթ. Մամաղանցի Միրզա Խսկեանդարը այսօր Սաբզեբազարի հրապարակում հաշիւ պիտի տայ ուղղափառ մուսուլմաններին Զեյնալաբազիների օգտին իր հաւաքած փողերի համար. շտապեցէր ներկայ լինել։”

Լսողները զարմացած իրար երեսի էին նայում եւ գլխները շարժում։ Ամէնքն էլ զարմանում էին թէ ինչն էր ստիպել Միրզա Խսկեանդարին մունետիկ քցել փողոցը եւ հաշուի կանչել մուսուլմաններին, երբ նա մի տարի առաջ բացարձակապէս անպատութիւն համարեց իր համար հաշիւ տալը։ Չորս կողմից իր երեսին տեղացող թուք ու մուրին նա լուռթեամբ տարաւ. եւ հիմա, երբ ամէնքն էլ մոռացել էին այդ մասին, նա յանկարծ հաշուի է հրաւիրում ժողովրդին։

Հետաքրքրութիւնը ընդհանուր էր. եւ մի երկու ժամ անց Սաբզեբազարի հրապարակում ասեղ քցելու տեղ չկար։

Մինարեթների մէկի գլխից լսուեց կէսօրուան աղանի ձայնը. հրապարակը լիքն էր բաղմութեամբ։

թմբուկը խփեցին, եւ Միրզա Խսկեանդարը բարձրացաւ իւր համար պատրաստած տեղի վրայ:

“Ուղափառ մուսուլմաններ — խօսեց նա — մենք թէեւ Զեյնալաբադցիների օդախն ուղարկած գումարների համար շատ խօսքեր լսեցինք, շատ գրութիւններ ստացանք, բայց աւելորդ համարեցինք իւր ժամանակին բացատրութիւն տալու, պարզ տեսնելով՝ որ զբարտիչ մարդիկ այդ բացատրութիւնը անտես պիտի անէին, եւ հասարակութեան մոլորեցնելու համար գործը պիտի խճէին...: Ուղափառ մուսուլմաններ, ահա ձեզ Զեանկեանի Ամիր-Նիզամից ստացուած պաշտօնական գրութիւնը կարդացէք եւ դատեցէք:”

Կարդում են.

“Թագթիզի Միրզա Խսկեանդարի բամազանի 17/ին գրած №. 5316 յայտագրի առթիւ՝ պատիւոնիմ հաշորդելու, որ Զեանկեանում ապրող Մոլլա Մուրադը յայտնում է՝ որ ինքը ստացել է Խսկեանդար Խսկեանդար օղուց 1500 դրամ եւ աւանդ է տրուած մի պատուաւոր վաճառականի մօտ. առ որ ստորագրեմ”

Զեանկեանի Ամիր-Նիզամ

Աղա Մամմատ Խան:”

Երբ ընթերցումը աւարտեցին, հասարակութիւնը մնաց բերանները բաց:

— Յետոյ . . . — հարցըին գէսից գենից:
— Էլինչ յետոյ, ուղափառ մուսուլմաններ,
— պատասխանեց Միրզա Խսկեանդարը — գուք ինձ տուել էիք 1500 դրամ տեղ հասցնելու հա-

մար. ես էլ հասցրել եմ այն տեղ, որ տեղ հարկաւոր էր հասցնել. էլ ի՞նչ էք ուզում:

— Բայց, Միրզա Խսկեանդար — աղազակեցին ամէն կողմից. — այդ փողերը գուք հաւաքեցիք Զեյնալաբադի հրկիզեալների համար. ինչո՞ւ համար երեք տարի պահում էիք. ինչո՞ւ համար այդ փողերը Զեյնալաբադողարկելու փոխարէն՝ ուղարկեցիք Զեանկեան Մոլլա Մուրադին. ինչո՞ւ խաբում էիք հասարակութեան մի անդամ ասելով՝ որ փողերը Զեյնալաբադ կ'ուղարկենք նոյն իսկ աւելի ապահովութեան համար կառավարութեան միջոցով. մի անդամ ասում էիք որ արդէն ուղարկել էք մեքթարխանէ բանալու. մի անդամ ասում էիք ուղարկել էք Մամուր օղլիին, մի անդամ Պալլու պէջին, հիմա էլ Զեանկեան Մոլլա Մուրադին անունու էլ՝ որպէս թէ իր կողմից՝ աւանդ է տուել մի պատուաւոր վաճառականի, որը անուն չունի: Հարշապէս ի՞նչ կապ կայ մեր եւ Մոլլա Մուրադին. ի՞նչ գործ ունի մեր փողերը այդ տեսակ անապահ վաճառականների մօտ, այն էլ աւանդ:

Միրզա Խսկեանդարը լուռ շփում էր մօրուքը:

“Պատասխանեցէք, Միրզա Խսկեանդար — Հարցնում էին այս ու այն կողմից. — ի՞նչ պէտք է անուի այդ աւանդը, բռնորդ պէտք է առնուի, բամբակ, թէ աղուէսի մորթ. քանի՞ տարի պիտի մնայ այն տեղ աւանդ, եւ ով պէտք է ստանայ այդ աւանդը, ախար երեք տարի է անցնում փողերը հաւաքելու օրից:”

“Ես խորհուրդ կու տայի — խօսեց ամբոխի միջից մի երիտասարդ — կարգադրել Մոլլա Մուրադին, որ այդ անանուն պատուաւոր վաճառական

203.



յանձնարարէ գնել այդ գումարին մի քանի բեռ
լաւ ջեանկեանի զէյթուն եւ ուղարկել Միրզա
Խսկեանդարին. ասում են՝ նա շատ է սիրում զէյթուն
ուտել:

Երիտասարդի խօսքերին հետեւեց մի ընդ-
հանուր ծիծաղ:

Ամէնքը աչքները դարձրած Միրզա Խսկեան-
դարի վրայ՝ ցանկանում էին լսել նրան, բայց նա
լուռ էր, եւ դարձնում էր շարունակիւր թաղպեհի
հատիկները:

Այդ բոպէին ժողովրդի ուշադրութիւնը
դարձաւ մի ուրիշ երիտասարդի վրայ, որ ամբոխը
ձեղքելով առաջ անցաւ, եւ սկսեց խօսել:

“Բանդեյի մուսուլմաններ — ասեց նա —
դուք բացատրութիւն էք պահանջում այդ մար-
դուց, որը իւր կեղծ բարեպաշտութեամբ տարի-
ների ընթացքում խաբել է մարդկանց: Դուք
հարցնում էք՝ թէ ինչո՞ւ նա, որ առաջ խոստացել էր
փողերը ուղարկի ջեյնալաբադ ուղարկելու, եւ այն
էլ աւելի ապահովութեան համար կառավարու-
թեան միջոցով, ուղարկեց ուրիշ տեղ: Դուք
հարցնում էք՝ թէ ինչո՞ւ երբ տարիներ անցնելուց
յետոյ նրանից հաշիւ պահանջեցին, նա խոյս
տուեց բացատրութիւն տալուց. եւ երբ նեղը կօնիս-
ցին, նա ասեց մէկ որ Մամուր օղիին է ուղարկել,
մէկ Պալող պէյին, մէկ ջեյնալաբադ մաքմար-
խանէ շինելու, եւ չիմա էլ առանց ամաչելու
ներկայացնում է ջեանկեանի Մոլլա Մուրադի գրու-
թիւնը, որ իբր նա ստացել է փողերը եւ աւանդ
տուել մի պատուաւոր վաճառականի: Սուտ ասողի
յիշողութիւնը կարճ է, մի դատապարտէք նրան:

Դառնանք այժմ այսօրուայ գրութեան. ձեզնից
ամէն մէկը հետաքրքրուում է իմանալ՝ թէ ով է այդ
անյայտ պատուաւոր վաճառականը. եւ զարմանալի
էլ չէ: Եթէ դիցուք մէկը ձեզնից մի վաճառական՝
տար իր գործակատարին 1500 դրան որեւէ մի
տեղ տանելու. եւ նա, այդ գործակատարը, երեք
տարուց յետոյ գառնար եւ ասէր իր տիրոջ՝
‘Հաջի աղա. ձեր տուած 1500 դրանը, որ ես
թէ հրան խսմակի Համագանցիին պիտի տայի, տուեցի
Շիրազում Հաջի Ալակբար իրզա օղլուն, որը աւ-
անդ է տուել մի պատուաւոր վաճառականի. ուրեմն
արևելին կարող ես գործդ տեսնել,: Եթէ, ասում
եմ, այդ տեսակ մի պատասխան յանդգնէր գործակա-
տարը տալու իւր տիրոջ, նրան փառաւոր կերպով
Փալախկայի կը գնէին, եւ ձեր ուղածին չափ ծեծ
կու տային, մինչեւ փողերը կը բերէր: Նշն վարմունքը
չէ միթէ Միրզա Խսկեանդարի վարմունքը եւ անա-
մօմութիւնը, թամաշայ արէք. գեւ մունետիկով էլ
հաշուի է հրաւիրում մեզ: Բանդեյի մուսուլման-
ներ. ես լաւ ծանօթ եմ այդ գործին, թյու տուեք
բացատրեմ: Երկու տարի առաջ մուշտեյիդի ըն-
տրութիւն կար: Միրզա Խսկեանդարը՝ որպէս շա-
հասէր մարդ, նայեց իւր օգտին. եւ տեսաւ որ
Մոլլա Մուրադը այդ պաշտօն ստանալի՛ նեղը մէծ
օգուտ կարող է ունենալ: Ակսեց քարոզել ժողովրդի
մէջ եւ աշխատել նրա օգտին: Մարդիկ, որոնք
չգիտէին նրա ծածուկ մոքերը, հաւատացին նրան,
եւ Մոլլան ընտրուեցաւ. սակայն գժբախտաբար
Միրզա Խսկեանդարի յօյսերը անսեղի անցան.
Թէ հրանում չհաստատեցին այդ պաշտօնի մէջ
Մոլլա Մուրադին: Անցան տարիներ, երբ Միրզա

Խսկեանդարին իր հաւաքած փողերի համար նեղը կոխեցին՝ նրանից հաշիւ պահանջելով։ Կա տեսաւ որ թալիսմաններ ծախելով եւ գիր անելով այդ փողը չէ կարող ձեռք բերել. ուստի յիշեց իւր բարեկամին, եւ խնդրեց որ այդ նեղ օրին օգնի իրեն։ Մոլան, հեշտ ու հանդիսա այդ փողերը իր գրպանից տուողը չէր, ուստի իւր աւելի բարեկամին ազատելու համար՝ հետեւեալ խորամանկ միջոցին դիմեց։ Վ'ասեմ — մտածեց նա — որ ստացայ եւ պահ տուի ուրիշին, առանց որեւէ մէկի անունը տալու. ես էլ կ'ազատուեմ նա էլ, ասեց եւ կատարեց։ Եւ աշա այդ թուղթն է, մուսուլմաններ, որ այսօր կարդաց Միրզա Խսկեանդարը ձեր առաջ, ամօթ եւ խայտառակութիւն նրան։

Հարցրէք այժմնրան՝ թէ այդ փողերը ե՞րբ եւ ի՞նչ միջոցով ուղարկեց Միրզա Խսկեանդարը ջեանկեան. ո՞վ է այդ աւանդ ստացող վաճառականը. եւ վերջապէս այդ աւանդը երբ եւ իցէ յետ պէտք է ստացուի, թէ ոչ։ Եւ կարծում էք նա չի պատասխանի. կարծում էք այդքան աշկեարայ փաստերի առաջ կ'ամաչի եւ կը դադարի իրեն արդարացնելուց։ Այ թորա. մի անդամ, մուսուլմաններ, տեղական խաններից մէկը 20 ոչխարյանձնեց Մոլա Նասրադինին, մօտակայ գիշելով իր ծանօթ մի ուրիշ խանին տանել յանձնելու համար։ Մոլան ճանապարհին ոչխարներից մէկը կերաւ, եւ տարաւ միայն 19։

— Մոլա — հարցնում է խանը նամակը կարդալով. — քեզ յանձնել են բերելու 20 ոչխար, ինչո՞ւ 19 է։

— Խանը սաղ լինի. այն, 19 է եւ 19 էլ պէտք է լինի։

— Ախար 20 պէտք է լինի։

— Եթէ 20 է, կարծիք չկայ որ 20 էլ պէտք է լինի։

— Մոլա, չէ՞ որ բերել էք 19։

— Հենց հաշուով էլ 19 պէտք է լինէր։

«Խանը տեսնելով որ չի կարողանում այդպիսով Մոլին բան հասկացնել, կանչում է իւր ծառաններից 20 հոգու։

— Մոլա, քանի՞ հոգի են սրանք. հարցնում է։

— Քան։

— Շատ լաւ. լիր ուրեմն։ Դու բերել ես 20 ոչխար, եւ գրանցից ամէն մէկին պէտք է միոչխար լնին. ուրեմն — դառնում է խանը իւր ծառաններին — թող ամէն մէկը ձեզանից գրանցից մէկը բռնէ։ Ամէնքը բռնում են բաց ի մէկից։

— Մոլա, հապա սրա ոչխարը ո՞ւր է. հարցնում է խանը։

— Ես ի՞նչ անեմ, թող շուտ բռնէր — պատասխանում է Մոլան առանց վրդովուելու։

“Բանդեյի մուսուլմաններ. ես վերջացրի ասելիքս. հիմա դուք դատեցէք։”

Մաշալահներին վերջ չկար։ Ամէնքը ծիծաղում էին առաջուանից աւելի լաւ խայտառակուած Միրզա Խսկեանդարի վրայ, որ չնայելով որ հասարակութիւնը արդէն ցրուում էր, կանդնած իւր տեղի վրայ, շփում էր մօրուքը։

* * *

Այդ օրից անցել է հինգ տարի: Կորելս գնացել էի թափթաղ. կրկն պատահում եմ Միրզա Խսկեանդարին: Սարզերազարի հրապարակում, նշն բարեպաշտ կերպարանքով մէջիդ գնալիս. նա շարունակում է հասարակութեան հին եւ նոր դարդերը ազատել իւր թալիսմաններով, եւ ջադուների սիրահար ամբոխը գնում է նրա յետեւից: Ահա նա դանդաղ քայլերով մօտեցաւ մի պարսիկ վաճառականի:

Աղա Իրզա — ասում է նա հանդարտ եւ բարակ ձայնով — մեր երեւելի Շեյխ Սադի բանաստեղծի գերեզմանի վրայ մի մեծ քիւմբէթ պէտք է շինել տամ, ամեն մի ասիր մուսուլմանի պարտըն է րահմաթմիքի համար չխնայել իւր օգնութիւնը. տուէք եւ թող զաղըաթը Աբբասը մէկին հաղար բազմայնի ձեր ունեցածը: Եա բարեի:

Վաճառականը հանեց գրպանից մի քանի դրան եւ տուեց Միրզա Խսկեանդարին:

Միրզան երկար օր հնելով քայլերը միւս կողմ ուղղեց:

Մնացի զարմացած: — Ի՞նչպէս . . . հարցնում եմ մօտիս մի ծանօթին. սա անցեալները Զեյնալաբարի փողերը կուլ տալու համար խայտառակուած Միրզա Խսկեանդարը չէ:

— Հենց ինքն է որ կայ:

— Բաս ինչի է նորէն փող հաւաքում:

— Խարջլող պրծել է:

— Բայց այդպիսով էլի նա ահագին փող կը հաւաքի:

— Արդէն 1500 զռան հաւաքել է:

— Եւ . . .

— Էլ ինչ եւ, հաւաքել եւ փառաւոր կերպով էլ անուշ է արել:

— Իսկ Շեյխ Սադիի քիւմբէթը:

— Աղամ, դոք էլ միամիտ մարդ էք եղել նկատեց ծանօթս. — օրհնած, ավ է հարցնողը. արդէն քանի ամիս է չորս կողմից պահանջումն որ հաւաքած փողերը Միրզան աւելի ապահովութեան համար մի սառափի տայ, որ տեղ թէ փողերը ապահով կը լինեն եւ թէ մինչեւ քիւմբեթի շինելը մի քանի հարիւր էլ շահ կը բերեն. բայց Միրզան լուռ իր բանին է:

— Եւ հասարակութիւնը տալիս է:

— Չիմարնելը շատ . . . :

— Իսկ ի՞նչ եղան Զեյնալաբարի օգտին հաւաքած փողերը — հարցը ես — որ գեռ եւս տարիներ առաջ աւանդ էին տուած մի պատուաւոր, եւ “անանուն” վաճառականի:

— Այնպէս էլ աւանդ մնացին:

— Բաս ե՞րբ պէտք է ստացուեն եւ գործադրուեն:

— Երբ Շեյխ Սադի բանաստեղծի քիւմբէթը կը շինուի:

— Իսկ ե՞րբ կը շինուի Շեյխ Սադիի քիւմբէթը:

— Երբ որ մի պատուաւոր, վաճառականի մօտ աւանդ տուած Զեյնալաբարի փողերը կը ստացուին:

— Իսկ հասարակութիւնը:

— Հասարակութիւնը . . . — Հեգնօրէն պատասխաննց ծանօթս. — Հասարակութիւնը, տեսնում ես էլի, յարգում, փող է տալիսայդ մարդուն, թէեւ մեծ մասը թքեց արդէն նրա վրայ:

— Իսկ Միրզա Իսկեանդա՞րը :

— Օհօ, նրա մասին էլ միք հարցնի. մի անգամ երեսի փարզան պատռելուց յետոյ, նա շիմա չի էլ ամաչում. խօսում է սրբութիւնից, բարյականութիւնից, եւ գիտէք ինչ. նա մինչեւ անգամ բաւական զգայուն է դառել: Դուք ի հարկէ յիշում էք՝ որ մի քանի տարի առաջ Զեյնալաբագի փողերի համար ի՞նչ թուք ու մուր կերաւ նա. այն ժամանակ նա այդ բոլոր թուք ու մուրը լուսութեամբ եւ հանգիստ կերպով տարաւ առանց նոյն իսկ արդարանալ աշխատելու, բայց երբ նորերս մի հանաբչի պատահմամբ հարցրել է նրան՝ “Միրզա Իսկեանդար, Զեյնալաբագից ի՞նչ խաբար”: Միրզա Իսկեանդարը կատաղեց, միւս օր նա գնաց մէջիս, եւ առանց ամաչելու ներկայ եղողներից՝ ծեծեց այդ ասողին. թէպէտ իրեն էլ լաւ քեօթակ տուին, ու մէջլիսից էլ ինչ-պէսմի անպատուուած մարդու լնդ միշտ դուրս վըոնտեցին. բայց եւ այնպէս իրեն ասելով՝ նա մէջլիսից դուրսեկաւ “պեխերըսրած եւգլուխը բարձրբունած:”

* * *

Որովհէտեւ Միրզա Իսկեանդարի հետ մենք շին ծանօթներ ենք, ուստի նկարագրելով նրան՝ մի անգամ էլ ես եմ հարցնում:

“Միրզա Իսկեանդար, Զեյնալաբագից ի՞նչ խաբար. ի՞նչ եղաւ Մոլլա Մուրագի “անանուն եւ պատուաւոր վաճառականին” տուած “աւանդըն”. ստացուեց, գործադրուեց, թէ թէ “գիշակերները կլանեցին”:

Պահառումից գոյացած օգուտը յատկացնուելու
է մի չքաւոր ուսանողի օգտին:

Գ.ԻՆ.Ն Է ՏԵԽՆ ԵՊԱՐՀԵՖԱԽ-ԲՈՎ. 50 ԿՈՎ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0332651

